ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 83

«10» 11 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱԿԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 40 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում իրականացվելիք կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության դատախազության գործառույթների իրականացումը վերապահելու, գործառույթները հստակեցնելու, ինչպես նաև դրանց արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 4-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթները օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը՝ այն առերևույթ հանցագործությունների մասով, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում.

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ

ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 7-րդ բաժնում (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննվող), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ, 261-րդ, 262-րդ և 353.1-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցագործությունների մասով.

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 11-րդ բաժնի 29-31-րդ գլուխներում նախատեսված առերևույթ հանցագործությունների մասով (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննվող և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-327. 6-րդ և 353.1-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի).

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 22-րդ գլխում նախատեսված (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննվող), ինչպես նաև այն առերևույթ հանցագործությունների մասով, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 26-րդ գլխում նախատեսված առերևույթ հանցագործությունների).

5) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 21-րդ գլխում նախատեսված առերևույթ հանցագործությունների մասով (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննվող).

6) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 9-րդ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ, 261-րդ, 262-րդ հոդվածներով և 26-րդ գլխում նախատեսված առերևույթ հանցագործությունների) և 10-րդ բաժիններում նախատեսված առերևույթ հանցագործությունների մասով.

7) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 9-րդ բաժնի 26-րդ գլխում նախատեսված առերևույթ հանցագործությունների մասով, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի վարույթում քննվող.

8) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 28-րդ գլխում նախատեսված, ինչպես նաև այն բոլոր առերևույթ

հանցագործությունների մասով, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում.

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությանը՝ իրականացնել Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով և 12-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված գործառույթները:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությանը՝ իրականացնել Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով և 12-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գործառույթները:

4. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանը՝ իրականացնել Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 12-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գործառույթները:

5. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությանը՝ իրականացնել Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված գործառույթները:

6. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանը՝ իրականացնել Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 12-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված գործառույթները:

7. Սույն հրամանի 1-ին կետով (բացառությամբ՝ 1-ին ենթակետի) նախատեսված վարչություններին՝ օրենքով և սույն հրամանով նախատեսված անմիջական դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման գործառույթներն իրականացնել այն բոլոր հանցագործություններով, որոնցով մինչդատական քրեական վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներում:

8. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տարբեր վարչությունների իրավասությանը վերապահված հանցագործությունների համակցությամբ հարուցված քրեական գործերով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնում է այն վարչությունը, որի իրավասությանը վերապահված է առավել ծանր հանցագործություններով համապատասխան լիազորությունների իրականացումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 223.1.-223.4 հոդվածներով նախատեսված առերևույթ հանցագործությունների հետ համակցությամբ դեպքերի, որոնց նկատմամբ համապատասխան լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը: Ծանրության հավասար աստիճան ունեցող

հանցագործությունների դեպքում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնում է սույն հրամանի 1-ին կետում նշված՝ հերթականությամբ սահմանված վարչությունը:

Եթե հանցագործությունների համակցությունը (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 223.1.-223.4 հոդվածներով նախատեսված առերևույթ հանցագործությունների դեպքերի) ներառում է առերևույթ սպանության (բոլոր տեսակների) դեպքեր, ապա Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը:

9. Եթե քրեական գործի քննության ընթացքում առաջադրված մեղադրանքը փոփոխվում է կամ առաջադրվում են այլ հանցագործությունների վերաբերյալ մեղադրանքներ, ապա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը շարունակում է Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթների իրականացումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջադրվում են սպանության (բոլոր տեսակների) կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 223.1.-223.4 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ մեղադրանքներ, որոնց դեպքում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացվում են, համապատասխանաբար, սույն հրամանի 1-ին կետի 2-րդ կամ 6-րդ ենթակետերով սահմանված կարգով: Եթե վարույթում գտնվող քրեական գործի նյութերով հարուցվում է նոր քրեական գործ և տվյալ գործերը միացվում են մեկ վարույթում, ապա Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացվում են սույն հրամանի 8-րդ կետի դրույթներին համապատասխան, **իսկ եթե վարույթները չեն միացվում կամ քրեական գործով վարույթից մաս է անջատվում՝ սույն հրամանով սահմանված ընդհանուր կարգին համապատասխան:**

10. Սույն հրամանով սահմանված կարգավորումները չեն գործում, եթե օրենքով կամ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններով, իսկ բացառիկ դեպքերում՝ կոնկրետ դեպքով, հանձնարարությամբ այլ բան է նախատեսված:

11. Մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը դատարանի վարույթում գտնվող գործերով դատախազական գործառույթները շարունակում են իրականացնել նույն դատախազները (նույն կառուցվածքային ստորաբաժանումները):

12. Սույն հրամանով չկարգավորված դեպքերում դատախազական գործառույթների իրականացման կարգը որոշում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

13. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին՝

Ապահովել մինչդատական վարույթի նկատմամբ արխիվացման ոչ ենթակա վերահսկողական վարույթների փոխանցումը սույն հրամանով սահմանված գործառույթների

բաշխմանը համապատասխան:

14. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններով և հանձնարարականներով, Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի որոշումներով սահմանված հանձնարարությունները կատարել սույն հրամանով նախատեսված գործառույթների բաշխմանը համապատասխան:

15. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված լիազորությունները հստակեցնելու մասին» N 40 հրամանը:

16. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ստեղծման օրվանից:

17. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ նրանց հանձնարարված ոլորտների:

18. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ